# «ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Չափումների միասնականության ապահովման մասին» 2012թ. փետրվարի 9-ի ՀՕ-22-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում և 19-րդ հոդվածի 1-ին մասում «արբիտրաժի,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնի,» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 18.1)-րդ և 18.2)-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1) **Չափագիտական վերահսկողություն՝** չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի խախտումների կանխարգելման, բացահայտման և վերացման նպատակով հաստատված տեսակի, ստուգաչափված և չափագիտական կանոններին համապատասխանող չափման միջոցների կիրառման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայության, չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմանն ուղղված վերահսկողություն.

18.2) **Չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմին՝** Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմին (այսուհետ՝ չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմին)»:

**Հոդված 3.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության **օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ներմուծման,** ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ

տեղեկատվությունը վերադաս մաքսային մարմնի կողմից տրամադրվում է չափագիտության լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

**Հոդված 5.** Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 21. Չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմինը.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը չափագիտական վերահսկողություն է իրականացնում հետևյալ ուղղություններով՝

1) տեսակը չհաստատված չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

2) չստուգաչափված չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

3) տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

4) չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների նկատմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վերահսկողության շրջանակներում լիազորված մարմինը չափման միջոցի՝ չափագիտական կանոններին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս)՝ օգտագործում է աշխատանքային չափանմուշ, աշխատանքային չափանմուշի օգտագործման անհնարինության դեպքում սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով հրավիրում է չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի և (կամ) պահանջում է չափման միջոցի փորձաքննության իրականացում:
3. Չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնի կարգադրագրի ձևը հաստատում է չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը:»:

**Հոդված 6.** Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) ստուգում է ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին՝ անհրաժեշտության դեպքում հրավիրելով Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցիչ.»:

**Հոդված 7.** Օրենքի 24-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «Կարգադրագիրը՝» բառից հետո լրացնել «չափագիտական» բառը:
2. 3-րդ և 4-րդ մասերում «տեսչությանը» բառը փոխարինել

«չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնին» բառերով:
3. 5-րդ մասում «վերցնում է» բառից հետո լրացնել «չափագիտական» բառը:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: